

“Հայկական ատոմային էլեկտրակայան” ՓԲԸ-ի ղեկավարության հայտարարագիրը ֆիզիկական անվտանգության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

“ՀԱԷԿ” ՓԲԸ ղեկավարությունը, գիտակցելով իր պատասխանատվությունը ՀԱԷԿ-ի անվտանգ շահագործման բոլոր ասպեկտների նկատմամբ, իր ամենօրյա գործունեության մեջ հատուկ ուշադրություն է հատկացնում ֆիզիկական անվտանգության ապահովմանը:

Նկատի ունենալով ինչպես արտաքին, այնպես էլ ներքին խախտում կատարողի սպառնալիքը՝ ապահովում է պաշտպանություն միջուկային տեղակայանքների նկատմամբ կատարվող սաբոտաժից (դիվերսիա) և միջուկային ու ճառագայթաակտիվ նյութերի չարտոնագրված հեռացումից՝ կրելով պատասխանատվություն համապատասխան ենթաբաժանումների և ծառայությունների կողմից իրականացվող պատշաճ վերահսկողության համար:

Հաշվի առնելով տեխնիկական առաջընթացը և սպառնալիքների բնույթի փոփոխությունները՝ ղեկավարությունը ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ՝ գոյություն ունեցող ռիսկերի նկատմամբ ֆիզիկական անվտանգության ռեժիմի ադեկվատությունը ապահովելու վերաբերյալ՝ ֆիզիկական պաշտպանության համակարգերի պարբերական գնահատման և նորացման միջոցով՝ այն ժամանակակից տեխնիկական միջոցներով, անձնակազմով և անհրաժեշտ ընթացակարգերով ապահովելու համար, որոնք կապահովեն արդյունավետության բավարար մակարդակ:

Դրված նպատակին հասնելը իրականացվում է հետևյալ հիմնական սկզբունքների հիման վրա.

-ՀՀ օրենսդրության, ֆիզիկական անվտանգության բնագավառում գործող կանոնների և նորմերի, պետական իրավասու մարմինների կողմից տրված լիցենզիայի պայմանների և պահանջների համապատասխանության ապահովում, ինչպես նաև միջուկային նյութերի չտարածման վերաբերյալ ՀՀ միջազգային պարտավորությունների կատարում,

-ռիսկերի նպատակասլաց նվազեցում, տարբերակված մոտեցման, խորը էշելոնային և բալանսավորված համալիր պաշտպանության սկզբունքների կատարում,

-ֆիզիկական անվտանգության համակարգերի փոխազդեցության ապահովում միջուկային և ճառագայթաակտիվ նյութերի հաշվառման ու վերահսկման համակարգի և միջուկային տեղակայանքների անվտանգ շահագործումն ապահովող ծառայությունների հետ,

-գաղտնիության սկզբունքի ապահովում և տեղեկության պաշտպանության ընթացակարգի կատարում,

-ֆիզիկական անվտանգության կուլտուրայի ապահովում ինչպես անմիջականորեն ֆիզիկական անվտանգության ապահովման պատասխանատու անձանց, այնպես էլ “ՀԱԷԿ” ՓԲԸ ողջ անձնակազմի հսկողության, վերահսկողության, մոտիվացիայի, ուսուցման և հոգեբանական պատրաստվածության ապահովման միջոցով, որի դեպքում ՀԱԷԿ ֆիզիկական անվտանգության ապահովումը հանդիսանում է առաջնային նպատակ և ներքին պահանջ,

-“ՀԱԷԿ” ՓԲԸ աշխատողների և ՀԱԷԿ-ում ժամանակավոր աշխատանքներ իրականացնող անձանց հուսալիության ստուգման կազմակերպում՝ օրենսդրական պահանջների համապատասխան,

-արտակարգ միջոցառումների պլանավորում և վարժանքների ու մարզումների պարբերաբար իրականացում,

-ֆիզիկական անվտանգության ոլորտում որակի ապահովում՝ ֆիզիկական պաշտպանության միջոցառումների արդյունավետության պարբերաբար գնահատման, միջոցների, ընթացակարգերի և ֆիզիկական անվտանգության համակարգերի ժամանակին նորացման և արդիականացման միջոցով՝ իրազեկ մարմնի, ինչպես նաև ինքնագնահատման և որակի աուդիտի պահանջների համաձայն:

“ՀԱԷԿ” ՓԲԸ ղեկավարությունը սիստեմատիկորեն կիրականացնի միջոցառումներ՝ ուղղված ՀԱԷԿ ֆիզիկական պաշտպանության բարելավմանը և բարձրացմանը և հատուկ ուշադրություն կդարձնի ու կօժանդակի “ՀԱԷԿ” ՓԲԸ աշխատողների, ինչպես նաև կողմնակի կազմակերպությունների աշխատողների նախաձեռնություններին՝ ուղղված ֆիզիկական անվտանգության բարձրացմանը: